1214 թվականից մինչև 1219, հետո գնացել է Հռոիճավանք, այնտեղից նորից վերադարձել է 1227 թվին և շարունակել առաջնորդությունը մինչև 1234 թվականը։

2. Անսովոր են և դժվար հասկանալի նվիրաբերության առարկաները, որոնք երեքն են։



Նկ. 41. Արձ. № 49։

ա. Մուսէս մարգարէին որդին իւր օգուտովն ու ջնասովը,

բ. Տասը օրավար լավ ադբին հող, որ ազատ է ամեն տեսակ հարկերից,

գ. Մուսէսն իր տներով, որպեսզի կոռի հողը բանեցնի և արգաւնին հաշվին աղ բերէ։

Նվերներից երկրորդը, որ տասն օրավար հող է, հասկանալի է և միանգամայն սովորական վիմական արձանագրությունների համար, իսկ առաջինը՝ Մուսէս մարգարէի որդին և երրորդը՝ Մուսէսը, անսովոր են։ Այստեղ, եթե Մուսես մարգարեն համարենք անձնանուն, պետք է ասենք, որ դա խիստ անսովոր ձև է, որովհետև հայերենում երկանուն անձնանուններ գրեթե չկան, բայց Մուսես մարգարեի որդին այնուամենայնիվ անձնանուն է և երբեք տեղանուն չի դառնա, և այդ մարդը նվիրել են վանքին հավանաբար իբրև շինական։ Այդ բանն ավելի լավ է պարզվում երրորդ նվերի միջոցով, որ Մուսեսն ինքն է, հավանաբար, վերևում հիշատակված Մուսես մարգարեն։ Սա իր տներով միասին նվիրաբերվել է վանքին, որպեսզի կոռի հողերը բանեցնե (մշակե) և ինչոր մեկի կամ մի բանի (Արգաւնին) հաշվին աղ բերե։

Եթե այստեղ լավ չի պարզվում, թե Մուսեսը որտեղից և ում հաշվին է աղ բերելու վանքին, բայց միանգամայն պարզ է, որ նա նվիրաբերվել է Վասակի և Խաթունի կողմից Սանահնի վանքին, որպեսզի մշակի կոռի հողերը։

3. 8-րդ տողի վերջի և 9-րդի սկզբի նոցա այլ գրին յետ և Քուրդաշահին հոգոյն։ Պետք է հասկանալ, որ ամեն ուրբաթ օր կատարվող ժամերգությունը ոչ միայն Քուրդաշահին՝ նվիրատու Վասակի և Խաթունի որդուն, այլև նոցա այլ գրե — նրանց (Վասակի և Խաթունի) էլ են գրել (հատկացրել)։